

ձէնէ խաչըռուս. ու թ ճուֆդ փէսան, որ ըլլայ այլի ժր ճուֆդ կամ թէ չհինարօնքն այլի ժր կնիկ մարդովէն ալ շատ չիլան ու վորոք հանսնիք ուղէնայ գալու նայ նա ըլլայ հինարօնքն այլ — ժէ ուժ բունդըն այս է որ գիտացվի օտընու- քայ հարկին ունէնայ խաչըռու գ ճուֆդ մարդը- վով գալու. կամ հարսի հարն քմարդըլով ալ մա- սիկ բարեկամին իրեն ալ վոժօր ուղէնայ նայ. ու այն օտընվորքըն ունէնան նարէլու զէ այն է պարտ ու պատիճն: —

ժգ ուժ բունդըն այս է որ գիտացվի ազվեսն ան պիրօն առնու. ու օրից որ աղչկն ըլլայ նայ. ետըր բարեին ան վաղաւոր առնու ուրուսի որ պատկըն ըլլայ նայ: —

ժէ ուժն գիտացվի որ խաչըռին մօա թէրմնեով գ հօգուն ալ շատ չերթան ու խաչըռն ալ շատ դ բարեկամն չի ձէնէ թէրմնի վրայ: —

ժը բունդըն այս է վոր գիտացվի հինարկուցէն ալ շատ հարսնիքն գօրով (1) չի կենայ. նումս հարկ է վոր գաւդներ ըլլան. ու ամէնուն զիմաց մէկ մէկ գաւաթ զնին. ու Վօժ իրեն բարեկամի թէն նունս գաւաթըն զիմացըն կէնայ չիտայ մարդու ալ. կամ թէ լաւաւու սապաչ չիտան գէրայ (2) հարսնեցը սէրը լաւուցան (3). կի վի- ճարէ: —

ժը բունդըն այս է որ գիտացվի եփօր փէսան բարեիք էրթայ նա գիտացվի ժր մարդ լըվացվին սէր տէրով խաչըռով վարդաւօժ կորըճներով

այոջափն ըլլան. ու ժր մարդու նկնն ունէնայ խաչըռն վիճարէլու ա մաճրի. Գարձեալ պրայի- ետրի (1) ալ այլի ատպետ ժր մարդ ատիլվին. ու ալվի ա մաճրի վիճարէ խաչըռն. ետըր աւէլըքն բան չունէնայ խաչըռն վիճարէլու ատիլուսա- րէն (2). —

Ի ուժ բունդըն ունէնայ տէր տէրըն զգր- րէնըն պէրնայ տալու: —

Իս ուժ գիտացվի որ կորըճներն աւէտիս քա- չին նայ ա աւէտիս մը ատին. ու ա գօլին ատթ մը ա ունըն ալ շատ չատին: —

Իր ուժ բունդըն գիտացվի որ Աստուած չի տայ որ հանտպէր որ կրակ ընէր մէկկնիլօր (3) տու- նը մեր գէղին մէջ նայ ունէնան ամէն տուն մէկ մէկ մարդ խրկէ ու գօֆով (4) կամ լրպրով (5) սն տար մօր օր շուր տանին անցնէլու գան տու- նը. ետըր վար ատնէն օր չի գտվէր մարդ մանլ (6) կամ ծարըժվոր կամ հիիկն (7) մարդ օր վազեր ինչես օր գրած էր նա գիտացվի օր ժր մաճրի պի- տայ ճորտըն (8) հիլօրն օր չի խրկէ նայ:

Ից բունդըն գիտացվի որ ամէն մարդ մեր գէղին մէջ Վօժ իրեն. տանը գօրնէն (9) լարբանր (10) անէ սնպատաւու զէրայ չանէ ու քովի վիլինը (11) զեն ունէնայ շաթնին կօզմանէ նայ պիլիճարէ այն- պիսին օր շաթնանը աւեր ըլլայ կամ չի կէնայ նա. ու ֆռնիկն (12) ալ պաչչինը անէ շաթան վօժ իրեն պալչին չօտ.

Այս է գիր հասգատու թեան.

Հ Ա Մ Ա Տ Ա Ր Ա Մ Ա Շ Ե Ր Ա Ր Հ Ա Յ Ա Յ Յ



Մշակ րազրի մէջ (N^o 39 սպրիլ 6) կը կարգանք հետեւեալը՝ որ Թարգմանուած է « Hamburger Fremdenblatt » րազրէն. « Իբրդրուսի Սանասարեան գարտըռու պահպան վում է մի նշանաւոր աշխարհագրական քար- տէգը, 1640 թ-ի հրատարակութիւն: Փար- տէգը սպված է Ամստէրդամում և ներկա- յացնում է երկու կիսագունդերը Հայերէն արձանագրութեամբ: Հայկական այդ քար- տէգը նշանաւոր է մանաւանդ նրանով, որ նրա վրա շատ ճիշդ գծագրված է Նիզոս գետի

հոսանքը և ներքին Աֆրիկայի բոլոր լճերի գասաւորութիւնը: Քննելով քարտէգը իր բո- լոր մանրամասնութիւններով, կարելի է գալ

- (1) Պրպեր = Սափրէ: (Թուրք. պէրպէր բառէն):
- (2). Ատիլուտրէն = Այս շափէն:
- (3) Մէկնիվօր = Մէկէ մը, մարդու մը:
- (4) Գօֆու = Ջուր փանու փայտէ զայլ:
- (5) Լրպէր = Փայտէ գայլ մեծկակ. է բառ ևու- գարական Coeber:
- (6) Մանլ = Էրի մարդ ծառայ (ու չէ կին):
- (7) Հիիկն = Որ և էրէ:
- (8). Ճորտըն = սուգանը:
- (9). Գօրն = Անկիւն. է բառ Ուլարի:
- (10). Չաթան = ցանկապատ:
- (11). Վէլին = Դրայի:
- (12). Ֆռնիկն = երեկ մարդ (իտ. fondo):

(1) Գօրով — անշուշտ նունգարական Kupa բառին աշխատողուն է, որ լուփ կը նշանակէ, նուաասր 11/3 լիտրի:

(2) Զէրայ = վանդի, որովհետև:
(3) Լաւուլի = Զուլթակ, կամ նուազածու:

այն եզրակացութեան, որ 250 տարի առաջ հայերը գեղեցիկ կերպով տեղեակ էին Նեղոսի աղբիւրների դրութեան, ոչ պակաս քան մեր ժամանակի ներքին Աֆրիկայի հետազոտողները » :

« Hamburger Fremdenblatt » լրագրի յիշած այդ քարտէջը, որ 1640 թուականին տպագրուած է, կ'ըսէ, պէտք է անպատճառ թոժմաս եպիսկոպոս Վանատրեզոյ հրատարակած Համատարած աշխարհագրոց քարտէզն համարել . որովհետև Ամստերդամի մէջ բացի թոժմայի յորինել տուած է տպագրած աշխարհագրական քարտիզէն՝ ուրիշ չի յիշուել, հետևաբար յիշեալ լրագրի դրած թուականն 1640, պէտք է վրիպակ ընթերցման և կամ տպագրութեան արդիւնք համարել և ուղղագրել 1695, որ է ստոյգ թուականն թոժմայի տպագրած Համատարած աշխարհագրոցին : Մեր դրած թուականն ինչպէս պիտի տեսնեն ընթերցողը, քարտիզին վրայ որոշ կերպով փորագրուած է՝ թէ՛ արաբական և թէ՛ եւրոպական տառերով . նախ և առաջ, երկու դասերուն մէջտեղ փորագրուած է հետևեալ երկու տող ոտանաւոր յիշատակարանն .

Նորոգ քանակ գեղեցիկմէջ անբռնանս
Փոխաբերեաց թոժա յետորդ ոստ Վանանդեան :

Այս երկու տողերու կը յայրորէ քարտիզին վրայ գտնուած տեղեաց, և այլն, համառօտագրութեան համար զորժածուած տառից ցուցակ մի, հետևեալ խորագրով . « Պատուազիր աշխարհացոցին » , և ապա այս կարևոր յիշատակարանն .

Փորագրութիւն յոյց ցանկալի
ի ձեռն եղբայր ևորակաւոր .
Ազրիանու Ըսկոնքէի
Եւ Պետրոսի քաշվաբոժի
Ընդ Ղուկասու հրոտաբունի
երկամբ քաղցը յայս անոռի
եղբորդի իմ անդամակի .
Պահեսցէ էն յերում ծոցի :
յԱմստերդամ 1695 :

Բաց աստի կայ ի ստորև նաև հետևեալ լատին լեզուու համառօտագրի՞ յիշատակարանն՝

Hadrianus et Petrus
Damianus Schoonbek
Fratres Faciebant.
AMSTELDAMI
MDCXCV

Արդ վերոյգրեալ յիշատակարաններէն յայտնի կը տեսնուի՝ որ փորագրողքն են Աբնն .

րէի անուանեալ հոյանդացի երկու եղբայր՝ Ազրիանոս և Պետրոս, և այլն, որք հմուտ և քաջավարժ ըլլալով իրենց արուեստին մէջ, ըստ թելադրութեան թոժմայի, կրցեր են ամենայն ճշգրտութեամբ այդ դժուարին զործը ի գլուխ հանել փառահէղ շքեղութեամբ, որ մինչև ցայժմ հիացումն կը պատճառէ և տեսնողաց և դիտողաց : Յիրաւի երակակ զործ մ'է՛ դա և արժանի ազգային որ և իցէ վարժարանաց և գրագարանաց գեղեցիկ զարդարանքն ըլլալու . վասն զի « գրեթէ — ինչպէս կ'ըսէ Մեծ . Հ . Գ . Վ . Չարբհանայեան — երկու դարէ ետքը՝ փորագրութեան այսչափ և այսպիսի յառաջադիմութենէ՛ մը յետոյ, արուեստին հըմուտք և հետամուտք՝ դեռ ևս զարմանալեօք և հիացմամբ կը նկատեն զայն . և որչափ ալ զիլաւոր արդիւնքն եւրոպացի արուեստագիտին ընծայեն, զովութեան մեծ մաս մ'այլ իրեն առաջնորդողին կը վերաբերեն անանխանձարար » , այսինքն է՝ թոժմայի Վանանդեցւոյ :

Այս թոժմաս եպիսկոպոս իւր ժամանակին այլ և այլ գրքեր հրատարակած է մեծ ծառայութիւն մատուցած է ազգին, բայց իւր գլուխ զործոցն է այս աշխարհագրական քարտէզս, որ կը ձևանալ ութ կտոր պղնձեայ տախտակներէ, և որոց իւրաքանչիւրին մեծութիւնն է՝ 37X58 հարիւրորդամետր . գունդերուն շուրջը փորագրուած են ամբողջ կենդանակերպքն, այս ինքն՝ խեցեգետին, այծեղջիւր, խոյ, կշիռ, ցուլ, երկաւոր, առիւծ, կոյս, կարիճ, աղեղնաւոր, ջրձոս, ձուկն . ասոնք իւրաքանչիւրն իրենց նշանական կերպարանօք յոյժ հետաքրքրական և գիտական տեսարաններ կը ներկայացընեն : Քարտիզիս տպագրութենէն տարի մը վերջը հրատարակուած է նաև նորա բանային՝ այս խորագրով . « Բանայի համատարածի աշխարհագրոցին վերոյ նորածնի, զոր ի լոյս էած հայկական տառու, վեհանձն և արքափայլ հայրն մեր, տէր թոժմաս, աստուածազգեստ լաբունին Վանանդեցի, և առաքելաբոժ եպիսկոպոսն Սըբբոյ թաշին . շարագրեցեալ ի Ղուկասէ ապաշնորհ ջահնկալէ Վանանդեցւոյ, օպիւրք և ծախիւք թոժմասու վարդապետի, շարարար գութեամբ քաջ դպրի, տեսուն Մատթէոսի ներհուն տպագրի հայոց, յամի Տեսուն 1696 յԱմստերդամի » :

Ի վերջոյ այս ևս աւելցնեմք՝ որ այս ութ կտոր պղնձեայ տախտակներն անարատ պահուած կը գտնուին այժմ մեր տպարանին մէջ, ուստի և կը վանաուուի այդ քարտէզն ի Վեներտիկ Ս . Ղ ազար, և մի օրինակի գինն է՝ 5 ռուբլի, 12 փո . փափագողք կարեն դիմել մեր սովորական հասցէին : Խ .